

ՍԱՂՄՈՍԵՐԸ



Հեղինակ՝

ԷՐՄԵՍ ՌՈՆԲԻ

Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՅԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Օ³Յi áó ì³Ն; Ô^{31/3}ñ»³Մ

Սաղմոսները աղօթքն են երկու ժողովուրդների եւ երկու կրօնների. հրեայ եւ քրիստոնեայ: Սա արդէն Սաղմոսարանի եզակի իւրայատկութիւններից մէկն է. սահմանները գերազանցող իրականութիւն է, որ պէտք է գործածենք՝ մենք նոյնպէս մեր հերթին սահմաններն ու բաժանումները գերազանցելու համար:

Սաղմոսերգութիւն՝ հաղորդութեան գործիք:

Ի՞նչ է անում քրիստոնեան, երբ բացում է Սաղմոսների գիրքը: Աչքերը սահում են խօսքերի վրայով. խօսքերը, որ նախապէս փակուած էին գրքում, երեւան են գալիս, ծնւում են գրքից, քո հետ միասին շնչում են:

Բայց ասել, որ քրիստոնեան մի ընթերցող է, բաւական չէ. հարկաւոր է ասել, որ Սաղմոսներ ծնող է, որովհետեւ քանի դեռ Սաղմոսը փակուած է մնում իր գրքում, ոչինչ չի իմաստաւորում, մեռած է: Վերակենդանանում է, երբ դու եւ Հոգին վերարծարծում էք խօսքը:

Միմիայն երբ բացում ես խեցեփողի երկու պատեանները, գտնում ես մարգարիտը: Հին եւ Նոր Կտակարանները այն երկու պատեաններն են, որոնք իրենց ներսում պարունակում են անգնահատելի արժէք ունեցող մարգարիտը¹:

Արդ, երբ էջերից աղօթք է բարձրանում առ Աստուած, խօսքը դառնում է հաղորդակցութիւն, գերազանցում է սահմանները, ստեղծում է յարաբերութիւն: Աշխարհը սկսում է կազմաւորուել ու կարգաւորուել. մի «Ես» եւ մի «Դու», մի «գնալ» եւ մի «գալ», մի «տալ» եւ մի «ունենալ»: Աղօթքը կազմաւորում ու կարգաւորում է աշխարհը:

Յաճախ խօսքը, որն ընթերցողը կարդում է, որն աղօթողը ճամփորդութեան է դնում դէպի երկինք, արտաբերւում է երգեցողութեամբ:

Յայնժամ, աչքերից ու փափաքից բացի, ներգրաււում են ձայնը եւ արուեստը, այսինքն՝ մարմինը եւ պատմութիւնը. մարդու բնութիւն, դարերի մշակոյթ, հազարամեակների շունչ, սահմանների գերազանցում:

Նաեւ երբ խօսքը դեռ երգուած չէ, այլ միայն արտասանուած, արդէն աւելին է՝ քան սոսկ կարգացում:

Ամէն անգամ, որ բացում ենք գիրքը, որից կարդում ենք, որից արտասանում ենք, որից երգում ենք, աշխարհն ի մի է գումարւում մեր շուրջը:

Ծէսն, իսկապէս, այն վայրն է, ուր ի մի են գումարւում երկրի մշակութային բարձրակարգ արտայայտութիւնները: Վայրը մշակոյթի ու գեղեցկութեան մեծագոյն խտացման:

Մի պահ պատկերացրէք մի եկեղեցի, ծիսական մի արարողութիւն. ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, նկարչութիւնը, լոյսի խաղը, գեղազարդումը, ծաղիկները, երգը, գրութիւնների ընթերցումը: Իսկապէս ի մի են գումարուած մարդկային ստեղծագործ կարողութիւնների բարձրագոյն արտայայտութիւնները:

Հետեւաբար, կայ դարերի եւ անթիւ ու անհամար անձնաւորութիւնների կողմից բեռնաւորուած մի կշիռ, մի պատմութիւն, մի զանգուած, որը մեզ մղում է առաջ:

Արդ, «արտասանութիւն» եզրը սակաւ հրապուրիչ բառ է, յիշեցնում է դպրոցական դասերը, կամ թատերական ներկայացումները: Եւ սակայն, այս եզրը ունի իր առաւելութիւնները. իմաստաւորում է մի բացակայութիւն եւ մի ներկայութիւն:

Մի բացակայութիւն. երբ արտասանում եմ Սաղմոսներից մէկը, կամ մի բանաստեղծութիւն, ես պարզապէս ձայնն եմ մի ուրիշի, գրութիւնը պատկանում է մի ա՛յլ հեղինակի, պատկանում է մի բացակայ անձնաւորութեան:

¹ Մտթ 13, 45-46

Իսկ յետոյ մատնանշում է մի ներկայութիւն. որովհետեւ երբ լաւ եմ արտասանում, ես պէտք է ներքուստ յարեմ խօսքերին, մասնակից դարձնեմ զգագումները, իւրացնեմ եւ իմը դարձնեմ, անկեղծօրէն, ուրիշների խօսքերը:

Յայնժամ Սաղմոսների արտասանութիւնը ներկայանում է որպէս Աւանդութեան արարք, այս եզրի կենսական իմաստով. ես ինքս դառնում եմ այժմէականացումը մի պատգամի, որն ինձնում չունի իր ծնունդը:

Ես այսօր ներկայ եմ դարձնում մի պատգամ, որը ծնւում է ուրիշներից, որը գալիս է ուրիշ վայրից, սրբութեան ու ստեղծագործականութեան իր բռնով, որպէսզի ես էլ իմ հերթին այն աւանդեմ: Սա՛ է ճշմարիտ Աւանդութիւնը:

Ծ Ա Ո Ւ Ն Ո Ւ Ն

Սաղմոսները նման են հրաշքի հացերին, բազմացման մեծ կողովներում:

Սաղմոսները չպէտք է ընկալել պարզապէս որպէս հրեայ ժողովուրդը, որ աղօթում է: Սաղմոսները չպէտք է արտասանել պարզապէս այնպէս, որ կարծես Յիսուս Քրիստոսն է նրանց միջոցով խօսում: Եւ ոչ իսկ պարզապէս խօսքեր են, որ արտայայտում են իմ կեանքը: Պարզապէս աշխարհի աղքատների խօսքերը, կամ Եկեղեցու խօսքերը չեն: Այս «պարզապէս»ներից ոչ մէկը չեն: Սաղմոսները բազմացում են:

Սաղմոսները պարունակում են այս բոլոր օղակները, այս բոլոր շրջանները. խօսքերն են հրեայ ժողովուրդի, այսօրուայ Եկեղեցու, Յիսուս Քրիստոսի, աշխարհի աղքատների եւ անձամբ իմ, մէկը միւսի մէջ վերցուած, որ անցնում են մէկը միւսի միջով: Աղօթողը կարող է փոխել օղակը, ձայնաստիճանը, անցնել մէկ սիրուց միւսին: Մանաւանդ թէ, պարտաւոր է հրահանգուել կատարելու այս անցումը Սաղմոսների հոգնակի ոգու ներսում, եւ զգալ երբեմն Իսրայէլի ժողովուրդը, երբեմն Եկեղեցին, երբեմն Յիսուս Քրիստոս, երբեմն աշխարհի աղքատները, երբեմն էլ իր ներքին հոգեւոր կեանքը:

Եթէ որեւիցէ մի առիթով դժուարութիւն ենք գգում Սաղմոսների ըմբռնման ու ապրման գործում, դա պատահում է՝ որովհետեւ պէտք է տակաւին հոգեպէս ընդարձակուենք, լայնօրէն տարածուենք, պէտք է անցնենք սահմանները:

Դարեր շարունակ արտասանելով Իսրայէլի աղօթքը, քրիստոնեաներն ընդունել են, որ Սաղմոսների հեղինակները կարողացել են արտայայտուել որպէս ամբողջ մարդկութեան վկաներ:

Այս գործի համար ընտրուած լինելով, սրբազան հեղինակները գնացել են փնտռելու հեռուում, մի հեռաւոր ճիւղ, որը մեզնից առաջ է եւ իրենցից իսկ առաջ էր:

Սաղմոսների աղաղակի մէջ մեր բոլոր նախահայրերը, ամբողջ վիթխարի շղթան դառնում է մերձաւոր: Այս աղաղակը հասնում է հեռուները, շա՛տ հեռուները, եթէ ճշմարիտ է, որ Աստուծոյ առաջ այն աւելի հզօր է՝ քան մահը¹:

Եւ հարցը կայանում է նրանում՝ թէ որքան մարդկայնութիւն գոյութիւն ունի իւրաքանչիւր ընթերցողի, արտասանողի կամ երգողի սրտում, թէ որքան մարդկայնութիւն կայ քեզնում, որ կարող է միանալ այս աղաղակին:

Ի՞նչ է ստում այս աղաղակը:

Փորձենք բացել Սաղմոսների գիրքը ճիշտ մէջտեղում, գտնելով 150 Սաղմոսների կենտրոնում գտնուող 77րդ Սաղմոսը: Վերցնենք կենտրոնական Սաղմոսի կենտրոնական տողը եւ այնտեղ կը կարդանք խօսքեր, որոնք իսկապէս Սաղմոսարանի սիրտն են.

«Ես առեմ եմ. »Սա է իմ փոխադրանքը.

Բարձրեալի ազը փոխուել է»²:

Սաղմոսերգուն խօսում է ինչ որ մի փոփոխութեան մասին:

¹ Հմմտ. Սղմ 79, 11

² Սղմ 77, 11

Վերջացել է հրաշքների ժամանակը, Աբրահամի ժամանակը, փառալուր եւ պատերազմական Ելքի ժամանակը: Հրաշքների ժամանակի հետ միասին, Աստուածաշունչը միշտ ներկայացնում է մեզ հրաշքի վաղուայ օրուայ եւ վաղը չէ միւս օրուայ փորձառութիւնը:

Այսինքն փորձառութիւնը, որ հրաշքն այլեւս հեռաւոր իրականութիւն է:

Իսկ սա տառապանք է պատճառում, սա կրծում է հոգին ու մարմինը:

Ասում է Սաղմոսերգուն.

«Վրդովուած եմ եւ առանց խօսքի,

սիրտս ծարարեալ է անցեալի օրերը»¹:

Եգիպտոսից Ելքը ապրած մէկ սերնդի դիմաց եկել ու անցել են հարիւրից աւելի սերունդներ, որոնք այդ իրադարձութիւնից պատմութիւններ ու խօսքեր են միայն լսել:

Եւ տեսել են թէ ինչպէս է Տապանակը գերեզմարուել փղշտացիների կողմից, թէ ինչպէս են Դաւթի որդիները ապստամբել իրենց հօր դէմ, թէ ինչպէս են Արեւելքի թագաւորները մեծագործութիւններ կատարել իրենց բանակներով: Եւ աքսորը ... :

Յայնժամ ծնւում է աղաղակը.

«Մի՞թէ ընդծիշտ լուել է քո խօսքը»²:

Որդիների աղաղակն է: Կեանքն անցնում է յաջորդ սերունդների աղաչանքի միջով, հրաշքների ժամանակից յետոյ:

Եւ աղաչանքը ծնում է ինչ որ մի նոր բան.

«Քո որդւման շառաչի ձայնին,

կայծակների լուսաւորեցին աշխարհը,

երկիրը դողաց ու խռովուեց:

Քո ընթացքը ծովի վրայով, Քո ճանապարհը գոտրի վրայով,

Քո հեղքերն անսրտանելի մնացին»³:

Սաղմոսերգուն ամբողջովին ինքնատիպ կերպով վերընթերցում ու մեկնաբանում է Ելքը, Կարմիր Ծովի ճանապարհը, խոր ջրերի միջեւ անցնող արահետը:

Աստուած այսօր էլ շարունակում է հրաշքներ գործել, բայց ջնջում է դրանց հետքերը:

Եւ ծովի մէջ բացայայտում է վայրը Աստծոյ անճանաչելի ներկայութեան: Ելքի ծով, անիմանալիութեան ծով:

Ո՞վ կը կարողանայ գտնել Իսրայէլի անցած ճանապարհը, Աստծոյ արահետը, երբ կոհակներն այլեւս վերադարձած կը լինեն իրենց նախնական վիճակին: Եւ սա մի խորհրդածութիւն է, թերեւս մի գիշեր, բայց որ սկսում է լոյս դառնալ:

Գոյութիւն չունի Ելքի, ո՛չ էլ միւս հրաշքների հնարաւոր հնախուզութիւն: Ելքը պատկանում է երեկուայ օրուան, հնարաւոր չէ այն պեղել ինչպէս Պրիամոսի ոսկիները, բայց ծովը նոյն երեկուանն է եւ այսօրուանը, նոյնը: Պատմութիւնը:

Եւ այս ծովը Իսրայէլի Աստծոյ մշտական ճանապարհն է, թէեւ ոչ ոք չի ճանաչում Նրա հետքերը:

Սաղմոսերգուն գիտէ, որ Իսրայէլը գտնւում է այդ նոյն ծովի ափին – տակաւին – , այդ նոյն մահուան ափին – տակաւին – , եւ որ Աստծոյ արահետները միշտ անցնում են ծովի միջով եւ որ Նա միշտ առաջնորդում է Իր ժողովրդին, «ինչպէս արօպավայրերուճդ արածող մի հօք»⁴:

Այսպէս մենք նոյնպէս, երբ ինքներս մեզ հարցնում ենք՝ թէ Աստուած արդեօք ի՞նչ ճանապարհներ է գծել Իր Եկեղեցու, իմ շրջապատի, անձամբ իմ եւ իմ ընտանիքի համար, կարող ենք միայն կրկնել Սաղմոսերգուի հետ. «Ոչ ոք չի ճանաչում Նրա հեղքերը»: Բայց

¹ Սղմ 77, 5-6

² Հմմտ. Սղմ 77, 9

³ Սղմ 77, 19-20

⁴ Հմմտ. Սղմ 77, 21

ճանապարհը գծուում է: Ճանապարհն անցնում է ծովի վրայով: Իսկ ջուրը յիշողութիւն չունի:

Ծովն Իսրայէլի համար խորհրդապատկերն է մահուան, մահուան խաւար անդունդի: Ուրեմն Աստուած քայլում է մահուան վրայով: Կեանքով է հեղեղում նաեւ մահուան ճանապարհները:

Սաղմոսը կապուած է ժամանակագրութեանը. վերաբերում է Իսրայէլի պատմութեան, Յիսուս Քրիստոսի պատմութեան, իմ անձնական պատմութեան բազմաթիւ պահերին: Սաղմոսը ոչ-ժամանակագրական բնոյթ ունի, ժամանակից անդին:

Բայց Նախախնամութիւն կամ հրաշք գոյութիւն չունի նստած մարդու համար:

Նախախնամութիւնը ճանաչում է միայն ճանապարհ ընկած, քայլող մարդիկ:

Սաղմոսները լի են ողբերգական իրավիճակներով, մահուան եւ թշնամիների ստուերը թւում է ամէնուր ներկայ. «Մահուան սարսափը յարձակուած է վրաս»¹, «Անդունդից դէպի Քեյ ե՞ծ աղաղակու՞մ, Յէր»², «Ոսկորներին ծէգ ողգ ծառ չի մնացել»³: Բաւական է բացել գիրքը, պատահական մի էջ, հայեացքը սահեցնել տողերի վրայով:

Որքա՞ն տարբեր է այս աղօթքների ձայներանգը մերինից. մենք Աստծոյ առաջ ներկայացնում ենք մեր գոյութեան փոքրիկ նեղութիւնները, երբեմն էլ ուղղակի ապրելու ճանճրոյթը:

Սաղմոսներում ամէն բան արմատական է, զգացումներով՝ որոնք երբեմն գրեթէ չափազանցուած են թւում:

Դժուարութեամբ ենք արտասանում դրանք, երբեմն, հանգիստ օրերում, նուազ վտանգուած օրերում, երբ մեր անձնական նեղութիւնները չեն հասնում այդպիսի սաստկութեան:

Սաղմոսները տառապանքն են եւ յափշտակութիւնը. մենք ապրում ենք տհաճութիւնն ու նեղութիւնը:

Այնուամենայնիւ, Սաղմոսարանը յայտնում է մեզ պատմութեան իրական դէմքը.

– որովհետեւ եթէ մի մեծ դժբախտութիւն ես ապրել, այն իր կնիքը դնում է քո վրայ, ընդմիջտ թողնում է քո վրայ իր նշանը. եւ տարիներ շարունակ, կեանքի իւրաքանչիւր օրը ներկայանալու է վշտակրութեան թեւերի ներքոյ.

– որովհետեւ իւրաքանչիւր մարդ սկզբից եւեթ իր վրայ կրում է մահուան կնիքը, մի ներկայութիւն՝ որն օրն ի բուն աշխատում է մեր ներսում, որն արդէն իսկ հաստատել է մեզնում իր բոյնը: Ամէն ջանք գործի ենք դնում այն մոռացութեան մատնելու համար, բայց. «Յիշիր, որ կեանքը մի շունչ է»⁴.

– որովհետեւ աշխարհում ներկայ է բազմութիւնը նրանց՝ ովքեր այս պահիս սպանում են, ովքեր այս պահիս հալածում են, ովքեր այս պահիս միայնակ են, հիւանդ, սարսափահար:

Յայնժամ Սաղմոսը, փոխանակ ինձ ասել տալու. «Ես աղօթում եմ նրանց համար», ինձ ասել է տալիս, մի փոքրիկ մեծ փոփոխութեամբ. «Ես նրանք եմ», «Ես այդ սարսափահար, վռնդուած, սպառնալիքների ենթարկուած անձերն եմ», «Ես՝ նրանց տեղը», «Ես նրանց ձայնն եմ»:

Ես եմ մարդը, Աբէլը, Կայէնը, այն անանունն ու անյայտը, որն այս պահիս աղաղակում է, երրորդ աշխարհի աղքատ գիւղերում, վիթխարի քաղաքների արուարձաններում, կամ էլ մերժում ու ետ է ուղարկում հարուստ երկրների սահմաններից:

Յայնժամ Սաղմոսն աւելին է՝ քան այս դժբախտներին մի աղօթքի ողորմութիւն տալը, այլ ընդհակառակն, իրենք են՝ որ մեզ կերպարանափոխում են իրենց աղաղակով,

¹ Սղմ 55, 5

² Հմմտ. Սղմ 29, 1

³ Հմմտ. Սղմ 38, 4

⁴ Հմմտ. Յոբ 7, 7; Սղմ 39, 12

ընդարձակում են մեր սիրտը, խուժում են մեր սրտից ներս եւ ներխուժում են Աստուածաշունչը, ինչպէս ներխուժում են պատմութիւնը:

Աղօթել՝ նշանակում է ասել «Ես» աշխարհի բոլոր աղէտեալների փոխարէն: Եւ կանչուած լինել դէպի նրանք: Եւ Աստուծոյ Համար անտանելի դարձնել մարդու աղաղակը:

Դէպի գերմանական լագերներից մէկն ուղղուած գնացքի պատին մատիտով գրուած գտնուեց հրեայ մի կնոջ պատկանող հետեւեալ գրութիւնը.

«Ես՝ Եւան, այստեղ եմ իմ որդու՝ Աբէլի հետ: Եթէ Հանդիպես Կայէնին, իմ միւս որդուն, ասա նրան ...»: Ոչ ոք ոչինչ էլ չսասց Կայէնին: Բայց սա մնում է որպէս նոր կազմաւորուող Սաղմոսի գեղեցկագոյն օրինակ:

Բայց ո՞րն է այն շաղախը, որով մահուան մէջ ցրուած անթիւ ու անհամար մարդիկ կարող են միեւնոյն վայրում, միեւնոյն խօսքերի մէջ միաւորել իրենց իղձը:

Աստուած ամբողջ մարդկութիւնը տեսնում է որպէս միայն մէկ մարմին իր Քրիստոսի հետ, միայն մէկ աղաղակ՝ խաչեալ Յիսուսի աղաղակի հետ:

Մարդկանց վշտահար աղաղակին պատասխանելուց առաջ, Աստուած այդ աղաղակը դարձրեց իրենը, եւ Խաչի վրայ աղաղակեց ինչպէս գոհաբերութեան գառը:

Եւ միեւնոյն բանն է, որ մենք նոյնպէս անում ենք Սաղմոսարանի հետ, արեան գրքի հետ, որն Աստուածաշունչն է:

Աղօթողը մէկ միակ մարմին է դառնում բոլոր ցիր ու ցան եղածների հետ. «Ինչպէս բլուրների վրայ ցրուած ցորենն է դառնում մէկ միակ հաց»¹: Ինչպէս աղօթում ենք Պատարագի ընթացքում. «Պարգեւիր մեզ դառնալ մէկ միակ մարմին, մէկ միակ հոգի, մէկ միակ սիրտ ի Քրիստոս Յիսուս»:

Խոնարհեցուած ու ստորացուած մարդու «Ես»ը Յիսուս Քրիստոսի «Ես»ն է, աղօթողի «Ես»ն է:

Աշխարհը վերստին կազմաւորում է, պատմութիւնը վերակազմաւորում է միութեան մէջ: Սաղմոսների միջոցով նոյնպէս Աստուած պատմութիւն է ստեղծում, ստեղծելով հաղորդութիւն եւ ազատութիւն:

ԳՈՂՈՒԹԵԱՆ ԱՐՏՈՒՄ, ՀԱՄԱՏՔԻ ԱՐՏՈՒՄ

Աղաղակից յետոյ, Սաղմոսներում արտայայտուող մարդկանց ամենայատկանշական գիծը կեանքի փափաքն է: Սասկուութեամբ, որը նախանձ է առաջացնում մեզնում, եւ վերարթնացնում է մեզ:

Ա. Կեանքը, Սաղմոսարանում, շատ պարզ իրականութիւն է. խօսքը վերաբերում է այն ամէնին՝ ինչը որ բոլորս, մինչեւ այսօր, հասկանում ենք այս անուան ներքոյ: Կեանքն այն ամէնն է, որ կարող ենք փափաքել:

Եբրայեցերէնում, իմաստի այս յոգնակիութիւնը արտայայտուած է *nefesh* բառով, որն ունի զանազան նշանակութիւններ. կենսատու շունչ, շնչառութիւն, անձնականութիւն, կոկորդ, հոգի: Եւ որը միաւորում է շնչելու, ուտելու եւ խմելու հասկացողութիւնը, գաղափարը չորացած կոկորդի եւ յագեցած բերանի, տրտմութեամբ փակուած եւ երգով բացուած կոկորդի — օրհնեղանք են ծաղկած բուրդ կոկորդներում, ի՞նչ կոկորդը չորացած կաւ է² — կոկորդ, հասկացուած որպէս հոգի, որպէս կեանք:

Կեանքը յոգնակի է, հարուստ, բաղադրեալ: Եւ թերեւս մանկան դէմքին է միայն հնարաւոր հանդիպել ճառագայթող ժպիտների եւ արցունքների այս հերթափոխութեանը, որը ներկայացնում են մեզ Աստուածաշնչի աղօթքները:

Բայց յատկապէս, Աստուածաշնչում գոյութիւն ունի հոգու եւ մարմնի մի միութիւն, որը մենք չենք ճանաչում: Մենք միմեանցից բաժանել եւ միմեանց հակադրել ենք

¹ Դիդաքէ 9, 4

² Հմմտ. Սղմ 126, 2; 22, 16

մարմինն ու հոգին, մինչդեռ աստուածաշնչեան մարդը ճանաչում է միայն մէկ իրականութիւն. միմեանցից անբաժանելի հոգի—մարմին:

Ահա այս պատճառով է, որ Սաղմոսներում հանդիպում ենք մի նիւթականութեան, մի մարմնականութեան, որը կարող է զարմացնել մեզ: Բայց որը մի մեծ դաս է: Աւետարանի, Յիսուսի ներկայացրած միեւնոյն դասն է. Յիսուսի, որին շատ յաճախ զբաղուած ենք տեսնում իր եղբայրների ու քոյրերի մարմնական խնդիրներով. Յիսուսի, որը սատանայի հետ իր համեմատական մրցումը սկսում է հացի նիւթի շուրջ, երբ քաղցած է:

Հանապազօրեայ կեանքի դասն է, որովհետեւ առարկաները, որոնք մեր ձեռքերից անցնում են ուրիշների, կամ նրանց ձեռքերից՝ մեզ (հագուստներ, սնունդ, ծառայութիւններ, դեղորայք ...), սոսկ առարկաներ չեն, այլ կեանքի եւ մահուան խորհրդանշաններ են: Հնարաւոր է նիւթապէս առարկաներ նուիրել, իսկ ներքուստ հոգեպէս մերժել տուեալ անձը: Այդպիսի դէպքում կեանքն այլեւս չի փոխանցւում:

Սաղմոսների կեանքը մեր հոգեկանութեան մէջ ըմբռնուած յաւիտենական կեանքը չէ. Սաղմոսների կեանքը բուրում է հաց, հարս, որդիներ, ցորենի բերնեբերան լի շտեմարաններ:

Բ. Սաղմոսարանի իւրայատկութիւններից մէկ ուրիշը խթանի նման հարում է Սաղմոսների խօսքերը, ձաղկում է դրանք. «Շուքով պարսպանիւր ինձ»¹, «Ծփապիր, ջուհնս արդէն կարու՞մ է»²: Աճապարանք, որովհետեւ կեանքն անցնում է, մի շունչ է: Իսկ յետոյ, Շէղում, Աստուծոյ հետ յարաբերութիւն գոյութիւն չունի կամ կարեւոր չէ: Միւս կեանքը ոչ-կեանք է:

Սաղմոսների մարդը հաւատում է, որ Աստուած գործում է այս ներկայ կեանքում: Եւ եթէ մենք կարծում ենք՝ թէ Քրիստոսի Յարութիւնն իր ներգործութեամբ չի հասնում մեզ արդէն այս ներկայ կեանքում, սա նշանակում է՝ որ նուազ յառաջադիմեալ ենք՝ քան Հին Կտակարանի հաւատացեալը: Յիսուսի Յարութիւնը, մինչդեռ, այժմ արդէն հասնում է մեզ իր ներգործութեամբ, իսկ յետոյ ընդարձակելու է մեզ մի կեանքում, որը վախճան չի ունենալու:

Սաղմոսերգուն յարութեան գաղափարը չունի, բայց մենք, մեր հերթին, ենթակայ ենք այս կեանքի գաղափարն այլեւս չունենալու վտանգին, գաղափարն այս մարմնականութեան, ուր խաղի են կանչուած սէրը եւ վիշտը, մերժումը եւ դատաստանը:

Աստուծոյ դատաստանը լինելու է նաեւ նիւթական առարկաների չափանիշով. «Քաղցած էի, բայց չկերակրեցիք ինձ. ծերկ էի, հիւանդ էի, լքուած էի ... »³: Ա՛յս աշխարհում, այս մարմնականութեա՛ն մէջ է խաղի դրուած փրկութիւնը:

Գ. Քանի՛ արտայայտութիւններ Սաղմոսներում խնդրում, փափաքում են նիւթական բարիքներ, դրանց յոյսն ունեն.

«Բարիքներով լիացնու՞մ եմ քաղցածներին»⁴.

«Մեր հօգտը բիւրասոր են, բերնեբերան լի են ցորենի շտեմարանները»⁵.

«Դու կերակրու՞մ եմ կենդանի բոլոր էակներին»⁶.

«Քո կինը նման է պողառուս որթաբունակի»⁷:

Այս թանձրացեալ (կոնկրետ) արտայայտութիւններով իսկապէս հասկացւում է այն ամէնը՝ ինչ մարդը փափաքում է, երբ լսում է այդ խօսքերը:

¹ Սղմ 69, 18

² Սղմ 143, 7

³ Մտթ 25, 35

⁴ Սղմ 107, 9

⁵ Սղմ 144, 13

⁶ Սղմ 145, 16

⁷ Սղմ 128, 3

Նաեւ երբ մարդը պարզապէս արտայայտում է հացի իր փափաքը, իր հոգին գործում է: Հացի մէջ հացից աւելի իրականութիւն է պարփակուած. ներկայ է խօսակցութիւնը, պատմութիւնը, հոգեւորը՝ նիւթականից բացի: «Իմ համար» հացը նիւթական իրականութիւն է. «մեր հացը», «իմ եղբօր համար» հացը հոգեւոր իրականութիւն է:

Իսկ Սաղմոսը երբեք, երբե՛ք, միայն իմ համար չէ:

Եւ երբ հացի փափաքից անցնում ենք մէկ այլ անձի, մէկ այլ մարդկային էակի, չդաւաճանող ընկերների, ընտանիքի, կողակցի, որդիների փափաքին, տակաւին միեւնոյն փափաքն է, որ սնունդից անցնում է սեռականութեանը. տակաւին միեւնոյն մարդկային եւ հոգեւոր փափաքն է, որով մարդկութիւնն ինքն իրեն կամենում է որպէս ներդաշնակութեան ու խաղաղութեան մէջ ընկղմուած հասարակութիւն. «Խաղաղութիւն հայցեցէք Երուսաղէմի համար, թող խաղաղութիւն լինի որդիներիդ վրայ»¹:

Հոգեւորը սկսում է մեր էութեան արմատին, մարմնի արմատին, սկսում է մեր գոյութեան ծայրագոյն սկզբին արդէն:

Ուրեմն, աղօթքը բնական է:

Իմ փրկութիւնը սկսուեց այն պահին, երբ մարմինս ու հոգիս հանդիպեցին միմեանց եւ միմեանց սիրահարուեցին:

Հաւատքի երգը եւ գոյութեան կենտրոնը համընկնում են միմեանց:

Մէկ-միակ եւ միեւնոյն ծարաւը Արամի ջրհորի մօտ, Սամարիայի ջրհորի մօտ, մարդու խորութիւններում, Աստուծոյ խորութիւններում:

Գոյութիւն չունեն երկու սէրեր: Սէրը մէկ է, ծարաւը մէկ է: Կենտրոնը մէկ է:

Եւ թէեւ սա մի քիչ անսպասելի է, մի ակնթարթում լուսաւորում է Աստուածաշնչի բազմաթիւ հատուածներ: Զարմանում էին, լսելով՝ որ Աստուած խոստանում է նիւթական եւ տեսանելի այդքան բարիքներ: Հարկաւոր էր կա՛մ լաւ հասկանալ այդ «երկրային», «աշխարհիկ» փափաքները, կա՛մ գրաքննութեան ենթարկել Աստուածաշնչի բազմաթիւ հատուածներ: Այս այլընտրանքի դիմաց ջանանք սխալ ընտրութիւն չկատարել:

«Յէրն է ի՞մ հովիւը,

Ինձ ոչինչ չի պակասում»²:

Սպասումներից ոչ մէկին ոչինչ չի պակասում: Սա ամբողջականութեան փայլակնացայտ արտայայտութիւն է:

Ահա Սաղմոսների լեզուն:

Ներկայացնում է մեզ այն ամէնը՝ որ գունազեղ է, արեւաշատ, շօշափելի եւ տաք՝ ինչպէս թոնրից նոր դուրս բերուած հացը:

«Այսպէ՛ղ՝ ողբերի երկրում ընթանալու ե՛մ Յիրոզ ներկայութեանը»³:

Ողջերի երկիր, այն ամէնի հետ միասին, որն այս խօսքերն արթնացնում են մեզնում. պատկերներ, փափաքներ, քաղցրութիւն:

Ընթերցել այս խօսքերն այն ամէնի հետ միասին, որն արթնացնում են: Ամէնի հետ, որովհետեւ ոչ մի մարդ չգիտէ՝ թէ ճշգրիտ կերպով ինչ է փափաքում: Եւ ճիշտ սա է փափաքի էութիւնը. ո՛չ թէ ճշգրիտ մի առարկայ, այլ՝ շարժում: Մի նաւարկութիւն դէպի «անդին»:

Ուրեմն հարկաւոր է փափաքել, երբ ընթերցում ենք աստուածաշնչեան այս գրութիւնները, հարկաւոր է ընթերցել դրանք մեր սեփական փափաքի հետ միասին, հարկաւոր է կարգալ դրանց մէջ մեր սեփական փափաքը:

Դ. Աղօթելը սա է. Սաղմոսի մէջ, Սաղմոսի հետ միասին, ընթերցել սեփական փափաքը եւ այն լուսարձակել դէպի Նա՛ ով ակունքն է մեր փափաքների:

Որովհետեւ փափաքը նման է ձայնամեկուսիչ խցիկին, որից դուրս՝ Աւետարանն ընկալելի չէ:

¹ Սղմ 122, 6

² Սղմ 23, 1

³ Սղմ 116, 9

Ո՞րն է առաջին խօսքը, որ Յիսուս արտասանում է Յովհաննէսի Աւետարանում: Խօսքը վերաբերում է մի հարցադրման, ուղղուած նրանց՝ ովքեր հետեւում էին Իրեն, եւ ուղղուած՝ մեզնից իւրաքանչիւրիս. «Ի՞նչ էք ուզում»¹: Իսկ մենք ի՞նչ ենք ուզում:

Եւ կոչն ուղղուած չէ բանականութեանդ, որովհետեւ բանականութեանդ վերաբերուող հարց չէ իմանալը՝ թէ ինչ ես ուզում. կոչն ուղղուած չէ քաջութեանդ, ուղղուած չէ հմտութեանդ, այլ՝ փափաքիդ. «Ի՞նչ ես իսկապէս փափաքում»:

Փափաքը վայրն է՝ ուր հնչում է խոստումը:

«Եկել եմ կեանք բերելու»²: Բայց եթէ մենք չենք փափաքում կեանքը, մեզ չի հետաքրքրում այն՝ ինչ Յիսուս եկել է բերելու:

Ձայնին հնչողականութիւն հաղորդող այս իրականութիւնը, որ փափաքն է, մենք կարող ենք խեղդել, ենթարկուելով սակայն վտանգին, որ կարող ենք խեղդել պատգամը: Որովհետեւ եթէ չես փափաքում սէրը, եթէ չես փափաքում կեանք, ի՞նչ կարող է տալ քեզ Աւետարանը:

Ասում էր Սուրբ Իգնատիոսը. «Մաղթում եմ ձեզ փափաքելու ունենալու փափաքը»:

Եթէ ապագայից ոչինչ չես սպասում, չես կարող աղօթել:

Եթէ յոյս չունես, եթէ կեանքն անշարժ է, չես կարող աղօթել:

Եթէ սիրտդ դատարկ է սպասումներից ու փափաքներից, չես աղօթում:

Մեր աղօթքը բխում է մեր կեանքի ներսում եւ հիւսուած է այն ամէնի հետ, որ զբաղեցնում է մեր օրերը:

Որեւիցէ մի բան, որ լցնում է սիրտը, կ'արտայայտուի աղօթքի մէջ:

Արդի վերջին փորձութիւնը քրիստոնէութիւնը սոսկ բարեգործութեան վերածելն է: Անհետանում է վերանցականութիւնը: Կենտրոնը ես եմ եւ ո՛չ թէ Աստուած: Մի ա՛յլ հանդերձաւորումով, վերադառնում է քրիստոնէական բարոյագիտութիւնը. կրօնը բարոյախօսութիւն է: Աւետարանը բարոյականի գիտութիւնն է:

Իսկ ո՞ւր է բարի լուրը: Մենք՝ քրիստոնեաներս պատմութիւն ենք ստեղծում ապրելով, տարածելով Աւետարանը, Բարի Լուրը. «Աստուած սիրում է»:

Փրկութիւնը չի կայանում նրանում, որ ես սիրում եմ, այլ՝ որ Նա սիրում է: Աստուած դարձաւ մարդ, որպէսզի մարդը դառնայ Աստուած: Սա՛ է Կրօնի էութիւնը. կապել, իրար կցել մարդուն եւ Աստծուն: Կեանքի սահմանների ընդարձակում:

Աւետարանը վերածել սոսկ բարի գործերի կատարման, նշանակում է ենթարկուել անաստուած կրօն ստեղծելու վտանգին, կրօն առանց Աստծոյ:

Բարոյական հետեւողականութիւնը յաջորդ հանգրուանն է, գալիս է յետոյ, բխում է Աստծոյ հետ կենսական միութիւնից:

Ե. Ուրեմն, մեր առաքելութիւնը կայանում է նրանում, որ պէտք է ընկալենք այսօրուայ մարդու փափաքները եւ պատասխաններ առաջարկենք, եւ ապա՝ փափաքներ առաջացնենք:

Հարցը նրանում է, որ հարկ եղածի չափ բարձր այեհաւաքներ չունենք, որոնց միջոցով ընդունակ կը լինէինք ընկալելու այսօրուայ մարդու փափաքներն ու խնդիրները:

Ես գիտեմ, որ կեանքի սրտում կայ ճշգրիտ կերպով միեւնոյն իրականութիւնը, որը կայ հաւատքի սրտում:

Գոյութեան սրտում եւ Աւետարանի սրտում կայ միեւնոյն իրականութիւնը. սէրը:

Սա՛ է քրիստոնէութեան մեծ ուժը:

Սաղմոսները միաւորում եմ այն՝ ինչը գոյութեան սրտում է, նրա հետ՝ ինչը հաւատքի սրտում է: Սաղմոսների հետ միասին պէտք է ընթանանք դէպի այս միաւորումը:

Բայց սա անել կարողանալու համար, նախեւառաջ պէտք է, Սաղմոսների օգնութեամբ, մեր ներսում ընկալենք սիրոյ լուրթիւնները, փսփսուքներն ու աղաղակները:

¹ Յվհ 1, 38

² Յվհ 10, 10

ՄԱՊԱՌԱՍԵՐԻ ԼԻ ԵՆ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ,
ՃԱՆԱՊԱՐՀԱՆԵՐՈՎ, ՈՒՊԻՆԵՐՈՎ

Եւ մեր հոգուն շատ մօտ իրականութիւն է, ճիշտ որովհետեւ շատ մօտ է մեր մարմնին:

Ճանապարհի գաղափարը պատշաճ է երկրին, որովհետեւ ամուր է ու հաստատուն, եւ պատշաճ է երկնքին, որովհետեւ նրանով ընթանում ենք, յառաջանում, կարծես թեւեր ունենայինք, երբ նպատակակէտը փափաքելի է:

«Տէրը պահպանելու է քո ելքն ու ծուրքը»¹:

«Առաջնորդում է ինձ ճիշտ ճանապարհով»²:

Ճանապարհի աւարտակէտը լեռն է: Փափաքը սլանում է դէպի գագաթը. «Մինչեւ հեռաւոր ժայռն են դու ինձ առաջնորդում»³:

Ճանապարհն ունի գագաթի միեւնոյն յատկութիւնները. հաստատուն է եւ առաջնորդում է դէպի վեր, ապահով է եւ ազատ:

Ազատութիւնը, որի գաղափարն է վերակոչում ճանապարհը, Եգիպտոսից Ելքի ազատութիւնն է, ազատութիւնը դէպի խոստացուած երկիրն ուղղուած ընթացքի:

Իւրաքանչիւր ոք կանչուած է դուրս գալու, ի լուր իր սեփական փափաքի, դէպի ուր հրաւիրում է Աւետարանը, որ միայն փափաքի մէջ է գտնում իր արձագանքը:

Անցքը դէպի Աստուած մի անակնկալ ուստում չէ դէպի բացարձակը, կատարելութիւնը, այլ մի հանդարտ քայլ է – «Դու ննջում ես թէ հսկում, սերժն ածում է»⁴ – դէպի Աստուած տանող անցքը մի հանդարտ քայլ է, ամէն մէկի համար տարբեր, իսկ ճանապարհին կան հանդիպելիք դէմքեր, իրագործելիք պարտականութիւններ: Բայց յառաջադիմում ենք միայն այն դէպքում, երբ «սիրտ» ենք ներդնում:

Աղօթքը՝ ճանապարհի մէջ «սիրտ» ներդնելու կերպն է:

Բայց եթէ սիրտը փափաքում է որոշակի բաներ՝ երբ աղօթում է, եւ ամբողջովին տարբեր բաներ՝ երբ չի աղօթում – ինչը մեզ յաճախ է պատահում – ո՞ր է, ուրեմն, մեր աղօթքի ճշմարտութիւնը:

Աղօթքը պէտք է կերպարանափոխի սրտի փափաքը, բայց սրտի փափաքը պէտք է սնուցի աղօթքը: «Սովորեցրու ինձ Բո արահեպները» խնդրանքը⁵ պէտք է ասուի այս միւս խնդրանքի հետ միասին. «Օգնիր ինձ յառազարթօնել ի՞մ ճանապարհում, այն ճանապարհում՝ ուր ես իսկապէս եմ ինքս եմ»⁶: «Կ'ընթանամ Բո արահեպներով, միայն թէ կածենաս ընդարձակել սիրտս»⁷:

Այդ ճանապարհն առաջնորդում է դէպի իր նպատակակէտը՝ Աստծոյ Արքայութիւնը, ուր վերջապէս գտնելու ենք այս ըմբոստ ու մասնատուած սրտի միութիւնը, հաղորդութեան մէջ այն ամէնի հետ՝ որն ապրում է, եւ Աստծոյ հետ՝ որը կեանքի աղբիւրն է:

«Երգիր եւ քայլիր», ասում էր Սուրբ Օգոստինոսը:

Եւ աղօթում եմ, որովհետեւ քայլում եմ, եւ ես քայլում եմ, ճիշտ որովհետեւ աղօթում եմ. երկրային ճանապարհներ, երկնային ճանապարհներ:

¹ Մղմ 121, 8

² Հմմտ. Մղմ 23, 3

³ Հմմտ. Մղմ 61, 3

⁴ Մրկ 4, 27

⁵ Մղմ 25, 4

⁶ Հմմտ. Մղմ 56, 14

⁷ Հմմտ. Մղմ 119, 32

ԿԱՐՈՐ ԽՕՍԲԵՐ

Քրիստոնէական ականդութեան մէջ եւ միւս կրօններում կարող են գոյութիւն ունենալ, կա՞ն ակելի խաղաղ ու անամպ կամ ակելի վերասլաց գրքեր՝ քան Սաղմոսարանը: Այո՛, կարող են գոյութիւն ունենալ, մանաւանդ թէ՛ ամբողջ գրադարաններ կարելի է լցնել աղօթքի գրքերով, որոնց պարունակութիւնն ակելի վերամբարձ է՝ քան Սաղմոսարանինը, նուազ նիւթական ու մարմնական:

Հարցը նրանում է՛ թէ գոյութիւն ունեն կամ չունեն ակելի լաւ շարադրուած, հոգին ակելի սնուցող ու կերտող եւ օրինակելի գրքեր, որոնց էջերում բացակայում են նզովքներն ու անէծքները: Սաղմոսարանում էլ չեն պակասում անդորրն ու երկնասլաց իրականութիւնները: Բայց գտնել Յիսուս Քրիստոսին, որը տիպար օրինակն է դաւաճանուած եւ մահուան դատապարտուած արդարի, մի Յիսուս Քրիստոս, որն հասնում է երեկուայ ու այսօրուայ բոլոր մարդկանց, իւրաքանչիւրի կեանքի վճռական, ճակատագրական եւ ճգնաժամային պահերին, սա գեղազրութեան կամ ներդաշնակ մտքերի խնդիր է:

Սա՛ է պարունակուած Սաղմոսարանում:

Աստուած ո՛չ միայն մեզնից ակելի կատարեալ է, այլ նաեւ, մեր հետ համեմատած, Ուրիշ է, Տարբեր է:

Ինչը որ ակելի յստակ է երեւում, երբ նա ստանձնում է մեր ճանապարհները եւ կատարում է մեր միեւնոյն արարքները:

Սաղմոսներն աղօթում են որպէս մեկնակէտ ունենալով հողի փոշին: Ո՛չ միայն գղջումի ու ապաշխարութեան հողն ու մոխիրը, այլ նաեւ փոշին ճանապարհների, ամբոխի, ապստամբութիւնների, անկումների:

Այդպիսի դէպքերում տեղի է ունենում այն՝ ինչ ասում է Ելից գիրքը. «Բարձրացրի ձեզ արծուի թեւերի վրայ եւ հասցրի ձեզ մինչեւ ի՞մ օօք»¹:

Միջակութիւնից՝ ազատ եւ բարձր թռիչքի, փոքրիկ հորիզոնից՝ բաց երկինք:

«Արծուի նման բարձրացրեց նրան իր թեւերի վրայ»²: Ուրեմն ով կանչուած է հովիւ կամ հնձուոր լինելու, զգում է թեւերի ներկայութիւնը, որոնք տանում են իրեն բարձր եւ հեռու, ինչպէս կարեկցանքը, որը տարել էր իրեն վշտի մօտ եւ ներսը:

Աստծոյ թեւերը: Առանց դրանց, միջակութեան բանտարկեալներն ենք, բանտարկեալները ոչինչ արժող մեր փոքրիկ ցանկութիւնների, որոնք չեն թողնում մեզ տեսնել պատմութիւնը եւ վեր բարձրացնել աշխարհը:

Աղօթողն աղքատ է. մի գաւազան ունի միայն՝ յոգնածութիւնը նրան կռթնելու համար, եւ հողաթափեր՝ քայլելու եւ տակաւին քայլելու համար: «Չի կրու՞ ո՛չ դրամ, ո՛չ քակ, ո՛չ էլ երկու պարմուճան»³, բայց ունի արծուի թեւեր:

Չունի ոչինչ, այլ միայն՝ թեւերի պաշար եւ դէպի երկինք ձգուող ճանապարհ:

Որոնք, ապա, Աստծոյ թեւերն են, Ինքն Աստուած է այդ թեւերը. «Ձեզ հեղ եմ լինելու աճէն օր, մինչեւ ժամանակի վախճանը»⁴, մինչեւ հունձքի օրը:

Կեանքի իմաստը «գոյութեանն ի նպաստ» լինելն է. լինելը սահմանի մարդ, անցուդարձի մարդ, բնակուած, վերամբարձուած, նաւամատոյցի ափ եւ մեկնումի նաւակայք, եւ թեւեր՝ որ բարձրացնում են, եւ կարեկցանք՝ որ գիտէ հոգատար լինել, եւ խօսք՝ որ գալիս է ուրիշ տեղից:

Եւ Յիսուս գնում էր քաղաքից քաղաք եւ գիւղից գիւղ, քարոզելով Աստծոյ մօտիկութիւնը եւ բժշկելով ամէն հիւանդութիւն, ամէն աղքատութիւն, ամէն ցաւ ու վշտակրութիւն⁵: Յիսուս այն մարդն է, որն Ինքն իրեն չի պատկանում եւ որ կամենում է

¹ Ել 19, 4

² 2Օր 32, 11

³ Ղկս 10, 4

⁴ Մտթ 28, 20

⁵ Ղկս 9, 11-17

բժշկել կեանքը: Նրանում, մեզնից իւրաքանչիւրը գտնում է վերջին իմաստը, որ հետեւեալն է. գոյութիւն ունենալ Աստծոյ համար, կեանքի նկատմամբ հոգածութիւն ցուցաբերելու համար, բժշկելու համար կեանքը:

Այսպիսի դէպքում, իւրաքանչիւր ոք Յիսուս Քրիստոսի հետ դառնում է խաչմերուկ, հանդիպման վայր՝ սահմանափակի ու անսահմանի, փոշոտ ոտքերի ու արծուի թեւերի, տղամարդու եւ կնոջ, որոնք իրենք իրենց անձերին չեն պատկանում. կարեկցանքի եւ լայնատարած թեւերի այր ու կին:

Մեր վրայ վերցնենք, ուրեմն, իր ճակատագիրը. գոյութիւն ունենալ Աստծոյ համար՝ բժշկելու համար կեանքը, կամ առնուազն՝ մեր հոգատարութեան ներքոյ վերցնելու հօտեր եւ ցորենի դաշտեր, վշտակրութիւններ եւ թեւեր, պահպանելու համար կեանքը մեր կեանքով:

Եւ աշխարհի հունձքերը կ'ունենան հոգեզուարթ հնձուորներ:

Փ Ա Ո Ւ Ք Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Խ Օ Ս Բ Ե Ր

Սաղմոսների կէսից աւելին դասակարգուած է որպէս փառաբանութեան Սաղմոսներ:

Փառաբանութիւնը եւ երախտագիտութիւն յայտնելը ընդհանուր մի գիծ ունեն. խօսքը վերաբերում է սեփական անձից դուրս գալուն, մի ուրիշ անձի դիմելուն, անձ՝ որն հասել է մեզ որպէս պարգեւ:

Ահա այս պատճառով է, որ փառաբանութեան խօսքերը գտնուում են աղօթքի կենտրոնում, սրտում, որովհետեւ աղօթելու համար հարկաւոր է դուրս գալ սեփական անձից:

Փառաբանութեան եւ երախտագիտութիւն յայտնելու ճիշտ հակառակն է նախանձը, այսինքն՝ տխուր լինելը ուրիշի ունեցած ինչ որ մի բարիքի համար, ուրիշների ձիրքերի կամ պարգեւաշնորհների համար:

Փառաբանութեան ազատութիւնը, մինչդեռ, վայելելն է մի բարիք՝ որը վայելում են ուրիշները:

«Դաւիթը Գաւիդ էր նուագում եւ իր ամբողջ ուժով պարում էր Յիրոզ առագ: Եւ Դաւիթը վուշէ պարծուճան էր հագել: Ահա այսպէս Դաւիթն ու Բարայէլի ամբողջ Գունը Գտնափոխեցին Յիրոզ Գապանակը ցնծութեամբ եւ փողի հնչմամբ»¹:

Իսկ Մեղքողը, Դաւթի կինը, տխուր ու նախանձոտ հսկայ Սաւուղի դուստրը, արհամարհում է Դաւթին, թշուառ ամբոխին միացած լինելու համար: Եւ պատժում է ամուլթեամբ:

Այս միջադէպը մեր առջեւ դնում է փառաբանութիւնը եւ այն թշնամի ուժը, որ դիմադրում է նրան. փառաբանութիւնը, որը Դաւթին արտայայտում է պարով, եւ նախանձի նշանն իր վրայ կրող մահուան ուժը, որը հասցնում է ամուլթեան:

Հասարակութիւնը, ընտանիքը, ուր բացակայում է ժամանակ առ ժամանակ միմեանց ուղղուած գովասանքը, ամուլ հասարակութիւն է, ամուլ ընտանիք է:

Յիսուս, մինչդեռ, սովոր էր գովասանքներ շռայլել: «Ասում եմ ձեզ, Բարայէլի Ծեգ արանից աւելի ծեծ հաւապք չեմ գպել», երբ գովում է հարիւրապետին², երբ գովում է Զակէէոսին³, երախտագէտ օտարերկրացուն⁴, քանանացի կնոջը⁵, անուշահոտ իւղը բերած կնոջը⁶:

¹ 2Սժ 6, 14-15

² Մտթ 8, 5-10

³ ՂԿս 19, 9

⁴ ՂԿս 17, 18

⁵ ՂԿս 8, 48

⁶ Մրկ 14, 9

Փառաբանութիւնը ներմուծել աղօթքի մէջ եւ աղօթքից արտահանել գովաբանութիւնն դէպի հասարակութիւնը: Դիւրին չէ գովելը, եւ սակայն, հասարակութիւնները՝ ուր շրջանառութեան մէջ չէ այս տրամադրութիւնը, այս դիրքորոշումը՝ թիկունք կանգնելու մէկը միւսին, ուրախանալու՝ որովհետեւ միւսը հարուստ է ինչ որ մի բանով, այդպիսի հասարակութիւնները դատապարտուած են սղուելու, ջնջուելու. այդպիսի հասարակութիւններում մարդիկ ջնջում են միմեանց, փոխանակ գորավիզ կանգնելու:

Փառաբանութեան աղօթք՝ նշանակում է նաեւ վայելել կեանքը, զգալ կեանքի համը եւ աղօթել ապրելու ուրախութեամբ, գոյութիւն ունենալու խոնարհ հաճոյքով:

Լուռ աղօթքի, ինքնին աղօթքից անդին անցնող աղօթքի պահեր, երբ սիրտը բռնկւում է. ստեղծագործ լարուածութեան եւ խաղաղարար վստահութեան պահեր, երբ հասնում է լոյսը՝ ճշմարտութեան կամ գեղեցկութեան բնագոյային զգացողութեան միջոցով. երբ լսում են իրադարձութիւնների սրտի բաբախիւնը, երբ մի իրական հանդիպման մէջ բացայայտում են հայեացքի ներքին օվկիանոսը եւ միւս անձը որպէս մի հրաշք: Երբ երակներդ զգում են կեանքով ուռած:

Պահեր, որոնց ընթացքում միանում են, ինչպէս գարնանը, ծաղկափթթիթ առաջին նշենու ալէլուիային: Կամ միանում են հողի շնչառութեանը, անտառի բուրմունքին, ամպերի կամ մառախուղի տիեզերական խնկարկումին: Կամ Երգ Երգոցին մի մեծ ու ազնուական սիրոյ, ուր մարմինները համն են հոգու եւ տօնախմբում են իրենց մարմնեղէն ծիսակատարութիւնը:

Գոյութիւն ունենալու խոնարհ բերկրանքը, երախտագիտութեան՝ մը փաստուած, ո՛չ անյազ կամ ինքնահաճ կերպով, այլ յարգանքով՝ գոյութիւն ունեցող ամէն ինչի նկատմամբ, որոնց վրայ Աստուծոյ Անունը դրոշմել է յաւիտենականութեան կնիքը: Գոյութիւն ունենալու այս բերկրանքը կարող է դառնալ ոչ-կռապաշտական ուրախութիւն, քո Մեծացուցէն, որ պոթկում է անկնկալ, գրեթէ որպէս ֆիզիքական ծէս, կենսաբանական փառաբանութիւն, ուղղուած Նրան՝ ով լաւ եւ բարի ստեղծեց ամէն բան¹:

Սա՛ սեփական պատմութեամբ աղօթել է: Մանաւանդ թէ՛ աղօթքը ազատագրել, թողնել՝ որ իմ կեանքն ինքն աղօթի:

Սովոր ենք զոհողութեամբ աղօթելուն, սովորենք աղօթել բերկրանքով:

ԱՊՈԹՔԻ ՏԱՐԻԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Փառաբանութիւնը կազմում է իւրաքանչիւր աղօթքի սկիզբն ու աւարտը. սա առաջին կանոնն է:

Երկրորդ կանոնն այն է, որ փառաբանութիւնն ու աղաչանքը այն երկու տարրերն են, որոնք միայն իրենք արդէն բաւական են՝ նկարագրելու համար աղօթքի ամբողջ էութիւնը:

Մեր առջեւ միշտ պէտք է դնենք այս երկու հարցերը. մեր աղօթքը կազմուած է միայն խնդրանքների՞ց, կամ՝ պարունակում է միայն փառաբանութիւն, ենթարկուելով վտանգին՝ որ կեանքի թշուառութիւնները չհասնեն իսկապէս հպուելու մեր աղօթքին: Փառաբանութիւն եւ աղքատութիւն, փառաբանութիւն եւ ողբերգութիւն. տարրերի մի գոյգ, որը գրեթէ միշտ միասին է գործում Սաղմոսարանում:

«Տէր, Ասրուած ի՞ծ, Դու ի՞ծ ապաւենն ես.

հեպապնդում են ինձ, փրկի՛ր, ապափի՛ր ինձ»²:

Այս հատուածը պարունակում է տիպար ուրուագիծն այն ամէնի՛ ինչ որ է աղօթքը:

Կարող ենք նրանում զանազանել չորս պատկերներ, չորս ժամանակներ.

ա) անուանակոչութիւնը. անուանում է Տէրը, իմ Աստուածը.

¹ Մրկ 8, 37

² Սղմ 7, 2

բ) փառաբանութիւնը. Դու իմ ապաւէնն ես, Դու իմ ուժն ես. սրա համար եմ Քեզ փառաբանում:

գ) կեանքի իրավիճակը. հետապնդում են ինձ, հալածում:

դ) խնդրանքը. փրկիր ինձ եւ ազատիր:

Այս կարճ հատուածը կատարեալ կերպով ներկայացնում է աղօթքի քերականութիւնը:

ա) Աղօթողը սկսում է անուանակոչելով Նրան՝ ում ուղղուած է աղօթքը, այսինքն՝ Աստծուն: Սեփական շուրթերին ունենալ Աստծոյ Անունը՝ արդէն իսկ աղօթքի շեմին գտնուել է նշանակում:

բ) Աղօթողը երբեմն գործի է դնում գովաբանութիւնների մի շարան, ինչպէս Երգ Երգոցում. «Սիրելի ի՞մ, գեղեցիկ ի՞մ, աղաւնի ի՞մ, քոյր ի՞մ, ի՞մ ծփերի՞մ»¹. գովաբանութիւնների մի շարան, ինչպէս Սաղմոսարանը. «Յէր, զօրութիւն ի՞մ, ի՞մ վէճ, ածրութիւն ի՞մ, ապարար ի՞մ, ի՞մ վահան ... »²:

Աստծուն վայելում է անանունութիւնը եւ միաժամանակ՝ գոյութիւն ունեցող ամէն անուն:

Արեւ, աստղ, կրակ, ջուր, շունչ, եղեամ, ամպ, վէճ, յենարան այն ամէնի՝ որ գոյութիւն ունի:

Աստուած գաղտնիքն է, որից անդադար բխում են լոյսի կաթիլներ: Այսպիսին է Աստուած, այսպիսին է նաեւ արարածներից իւրաքանչիւրը, որին մօտենում ես առանց նախանձի. արարածներից իւրաքանչիւրից, որին մօտենում ես հիացումով, բխում են լոյսի կաթիլներ:

Ուշադրութիւն դարձնենք, ապա, «իմ» ստացական դերանունի կրկնութեանը: Այն թաքցնում է մի մեծ գաղտնիք, մեծ՝ որքան Անունը, որովհետեւ արտայայտում է սէր, արտայայտում է դաշինք. «Ես կը լինեմ ձեր Աստուածը եւ դուք կը լինեք իմ ժողովուրդը»³:

Աղօթողը չի կանչում պարզապէս Եահոնին, «Նրան՝ որ է», այլ դիմում է «Նրան՝ ով իմ համար է», Աստծուն՝ որ ապրում է լուսարձակուած դէպի մեր կողմ. «Եթէ Աստուած ձեր կողմն է, ո՞վ կը լինի ձեր դէմ»⁴: Եւ մենք դիմում ենք այս Աստծուն, որ մեր կողմն է:

Արդ, աղօթքի կանոններն ասում են, որ հաւատացեալին պատշաճ չէ խնդրանքներ ուղղել Աստծուն առանց արտայայտելու Նրա նկատմամբ սեփական պատկանելութիւնն ու սէրը, առանց կրկնելու «Տէր իմ» կամ «Հայր մեր», առանց կրկնելու հաւատքի դաւանութիւնը, որ «Աստուած իմ համար է», որ «Աստուած մեր համար է»:

Աստուածաբանն ասում է. «Եահոնէ»: Աղօթողն ասում է. «Տէր իմ», մատնանշելով Աստծոյ նպատակամղուածութիւնն ու Նրա ներգրաւումը:

գ) Գովաբանութիւնն ու խնդրանքը բնականաբար ընթանում են միասին: Սա ըմբռնում ենք նաեւ Երգ Երգոցից. «Սիրելիս ասում է. "Բացիր դուռը, քոյր ի՞մ, ծփերի՞մ ի՞մ, աղաւնի ի՞մ, ի՞մ կապարեալ: Գլուխս եղեամով է ծածկուած"»⁵:

Երկու անձինք գտնուում են մէկ դռան երկու կողմերում: Աւելի պարզ ոչինչ չկայ, բայց ոչինչ այս իրավիճակից աւելի լաւ չի վերակոչում աղօթքը: Երկու անձինք՝ դռան երկու կողմերում: Պարզապէս «Թրջուած եմ, դուռը բաց» ասելու համար նոյնպէս

¹ Երգ 2, 13-14

² Սղմ 18, 3

³ Ղայ 26, 12

⁴ Հռմ 8, 31

⁵ Երգ 5, 2

Հարկաւոր է ճանաչումի նշաններ փոխանակել. ով է խօսում, ինչու է խօսում, ինչպէս է խօսում, ում է խօսում:

Առանց այս փոխանակման՝ աղօթքն իրական չէ: Կան խօսքեր, որոնք փաղաքշալի փայփայանքի են նման, եւ գոյութիւն ունի մի տեսակ սիրոյ ճակատամարտ, ուր զէնքը խորամանկ հնարամտութիւնն է (որովհետեւ եղեամով թրջուած գլուխը գլխաւոր պատճառը չէ, որի համար սիրեցեալը կամենում է ներս մտնել. պատճառն ամբողջովին ուրիշ է, սիրոյ բաղձանքն է), բայց սիրոյ մէջ ամէն բան սէր է, նաեւ խաղը եւ խորամանկ հնարամտութեան զէնքը:

Այսպէս, խնդրանքը մի պայքար է՝ ուր սերտօրէն ներգրաւուած է սիրոյ գովաբանութիւնը:

Լաւ աղօթելու համար՝ հարկաւոր է ներգրաւել սիրոյ գովաբանութիւնը:

Իսկ սէրն առաջնորդում է քեզ անջատուելու ու մի քիչ հեռանալու քո անձնական կարիքից, քո «ես»ից, ճանաչելու եւ ընդունելու համար «Դու»: «Դու ի՞նչ պատէնն ես: Դու ի՞նչ աղանձն ես, սիրեցեալն ես ի՞նչ»¹:

դ) Յետոյ հասնում է խնդրանքի հերթը: Բայց ի՞նչ իմաստ ունի խնդրելը, եթէ ընդունակ չես տեսնելու այն՝ ինչը որ արդէն տրուել է քեզ: Նման ենք այն երեխաներին, որոնք հազիւ թէ ստանում են այն՝ ինչ խնդրել էին, մի կողմ են նետում ստացածը, մոռանում են պարգեւը: Բայց ով մոռանում է ստացած բարիքը, յետոյ այն կրկին կը խնդրի, բայց վատթար կերպով, կրկնելով մեռած խօսքեր:

Շնորհակալութիւն յայտնել, այո՛: Բայց շնորհակալութիւն յայտնել կարողանալու համար պէտք է ճանաչեմ ստացածս բարիքը. գոնէ կեանքը, որ ընդունակ չեմ տեսնելու, եւ ընկերները, եւ սիրտս՝ որ ընդունակ է բոցավառուելու:

Սովորել բարի գնահատել գոյութիւն ունենալու փաստը: Հարկաւոր է փառաբանել՝ խնդրելուց առաջ, բայց փառաբանել կարողանալու համար հարկաւոր է իմանալ եւ վայելել այն՝ ինչ բարի է: Որեւիցէ մի աղօթքի նախանիւթը բացայայտումն է այն փաստի, որ աշխարհը բարիք է, որ աշխարհում գոյութիւն ունենալը բարիք է, ծածուկ բարիք՝ ուր գտնում ենք Արարիչ Աստծուն, Նրան՝ որ «դիպեց սրտիցուս ամէն բան եւ ահա գեղեցիկ էին ու բարի»²:

Աղօթողը յաճախ ուրիշների եւս հրաւիրում է մասնակցելու իր կատարած փառաբանութեանը. մի երրորդ անձ, շատերին, ամբողջ աշխարհը. «Եկէ՛ք, ծխախն փառաբանենք Յիսուսը»³: Մինչեւ օրս, Եկեղեցու Արեւագալի Ժամերգութիւնը սկսում է այս հրաւերով: Ուր այլոց խօսում է Աստծոյ մասին: Փառաբանութիւնը փոխանցում, աւանդում է հաւատքը:

Փառաբանութիւնն աւելի ազդեցութիւն է գործում մեր վրայ՝ քան հաստատող բանաձեւումները: Վերջիններն հաստատում են, իսկ յետոյ ամէն բան վերջացած է:

Փառաբանութիւնը, մինչդեռ, իր հետ բերում է յուզմունք, բերկրանք, երեկուայ ու այսօրուայ փորձառութիւն, բերում է Դաւթի պարը եւ եղջիւրը՝ որ հնչում է ու պատուհաններից ձայն տալիս Սիոնի բնակիչներին: Հաստատող բանաձեւումներից շա՛տ աւելին:

Միեւնոյնն է՝ թէ խօսքը վերաբերում է փառաբանութեանը կամ խնդրանքին, ուրիշները միշտ ներկայ են: Շատ հազուադէպ են այն Սաղմոսները, որոնց մէջ գործում են միայն աղօթողը եւ Նա՛ ում ուղղուած է աղօթքը: Աղօթողը թւում է՝ թէ ուզմամբարական դիրք է գրաւում աշխարհում, եւ թւում է՝ թէ ամէն բան կախում ունի նրա յաղթանակից կամ նրա պարտութիւնից: Սաղմոսները մեզ ուսուցանում են, որ մեր ճակատագիրը եւ ամբողջ աշխարհի ճակատագիրը փոխկախումնաւոր են:

¹ Սղմ 32, 7; Երգ 2, 14

² Ծնդ 1, 31

³ Հմմտ. Սղմ 34, 4

Աստուած վերակազմաւորում է աշխարհը. սա՛ է աղօթքի խորին տարողութիւնը:
Այս իսկ պատճառով, աղօթքն ընդարձակում է աղօթողի սիրտը, եւ հետեւաբար՝
աշխարհի մի նոր արարում է:

ՓԱՌԱՔԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՊԵՏԻ ԱՊԱԳԱՆ

Սաղմոսներում «յետոն» ձգում է «այսօրուան»: Ապագան ներկայի բնօրինակն է:
Սաղմոսները մարգարէութիւն են:

Դէպի ապագան ուղղուածութեան նշանը գտնում ենք մի շատ գեղեցիկ
արտայայտութեան մէջ, որը շատ անգամներ վրիպում է մեր հայեացքից. «Նոր երգ»:

«Նոր երգ երգէցէք Յիրօզը»¹. «Նոր երգ դրէցիր բերանուձա»². «Փրկիր ինձ եւ նոր երգ
կ'երգեմ քեզ»³:

Երբ մարդ դուրս է գալիս անդունդից, չի կրկնում ուրիշների խօսքերը, չի
եղանակում հին երգեր: Դուրս գալ վիհից՝ նշանակում է ծնունդ: Իւրաքանչիւր ծնունդ
նորութիւն է: Իւրաքանչիւր փրկութիւն նոր է: Եւ հետեւաբար, երգը նոյնպէս նոր է,
պարունակելով խօսքեր, որոնք միայն քոնն են:

Եւ ճիշտ այն է՝ ինչ յոյսը փափաքում է. որ Աստուած յայտնուի որպէս նոր երկրի եւ
նոր երկնքի Արարիչ: Մշտապէս ինքն իրեն կրկնող փառաբանութեան գաղափարը չի
ներկայացնում Աստուծոյն այնպէս՝ ինչպէս որ Նա է: Կրկնութիւնը ծնում է սովորոյթ:
Մինչդեռ Աստուած յաւիտենական է, իսկ յաւիտենականութիւնն անհնարին է սովորոյթի
վերածել: Եթէ յաւիտենականութիւնը կրկնութիւն է, այն մեզ այլեւս չի հետաքրքրում:

Բոլորս էլ ճանաչում ենք «առաջին անգամուայ» հրաշքը. առաջին անգամ, որ
ծանօթացանք մի իրական ընկերոջ հետ, առաջին անգամ, որ սիրահարուեցինք, առաջին
անգամ ... : Յետոյ դառնում է սովորոյթ:

Յաւիտենականութիւնը, մինչդեռ, առաջին անգամուայ հրաշքն է, որ տեսում է
միշտ: Յաւիտենականութիւնը նշանակում է չվարժուել, սովորոյթի չվերածել:

Կրկնութիւնը կարող է մինչեւ իսկ ծածկել, չքացնել Աստուծոյ ճշմարիտ
յաւիտենականութիւնը, որովհետեւ Աստուած միաժամանակ յաւիտենական է եւ նոր:

Իսկ եթէ տառապանքը մեզ կորցնել է տուել հնամենի երգի հետքերը, երբ կարող
էինք ասել. «Տու՛մի վրայով անցնում էր ճանապարհդ, բայց հեղբերդ անտեսանելի մնացին»⁴, ուրեմն
խաւարից յետոյ, արշալոյսի առաջին շողերի հետ, կեանքի խոր խոռոչից պէտք է որ
յայտնաբերէինք ու մէջտեղ հանէինք նոր փառաբանութիւնը, մի նոր երգ:

Ահա, բոլորս էլ պէտք է որ գրէինք մեր անձնական Սաղմոսարանը, Աստուծոյ
հարկերերորդ Անունը, անունը մեր սիրոյ, բոլորս էլ պէտք է որ գրէինք մեր Մեծայուսէն,
որպէսզի երգը նոր լինէր:

Ինչպէս յորդորում էին միջնադարեան «Օրհնեցէք»ները. «Նոր օրհներգներ թող
երգուեն»: Եւ մատնանշում էին Եւրոպայի գարունը: Մենք բոլորս որդիներն ենք
«Օրհնեցէք»ների եւ որդիներն ենք Սաղմոսարանի. բոլորս էլ աշուղներ ենք, որ փնտռում
են նոր խօսքեր ու մեղեդիներ, հնարաւորութիւն ստեղծելով, որպէսզի փափաքի կենդանի
կոճից ծլարձակուեն եւ մեծ ազատութեամբ գոհարագարդուեն արարքներ ու խօսքեր:

Ով փառաբանում է՝ դառնում է առաքեալ. փառաբանութիւնը հաւատքի գործ է եւ
առաքելութեան գործ, որը մեզ եւ աշխարհն ամբողջ ներքաշում է դէպի դէմքի
տեսութիւնը մի Աստուծոյ, որն երիտասարդ է, մշտնջենաւորապէս նոր, տիեզերքի գարունը,
մեր միայնութիւնների անխոնջ սերմնացանը:

¹ Սղմ 33, 3

² Սղմ 40, 3

³ Սղմ 144, 7-9

⁴ Սղմ 77, 20

Աստուածաշունչը բազմաթիւ գրքերից ձեւացած գիրք է, եւ դրանցից իւրաքանչիւրում կան բազմաՀազար նախադասութիւններ, իսկ իւրաքանչիւր նախադասութեան մէջ շա՛տ ու շա՛տ աստղեր ու ձիթենիներ ու աղբիւրներ, մտրուկ իշուկներ ու թղենիներ, ցորենի արտեր, թռչուններ ու ձկներ, եւ քամին, ամէնուր քամին, երեկոյեան քամու ստուերը, առաւօտեան քամու վարդագոյն լոյսը, արեւամուտների կարմրաւուն դեղինը, մեծ փոթորիկների սեւը:

Այսօրուայ գրքերը թղթից են, երեկուայ, մի ժամանակուայ գրքերը մագաղաթից էին: Աստուածաշունչը միակ գիրքն է, որ քամուց է, մի հեղեղ է թանաքի եւ քամու: Եդեմի քամին, Քորեբի քամին, միլիոնաւոր ու միլիոնաւոր արեւամուտների, քամին՝ Զատիկի արշալոյսին դէպի Քրիստոսի գերեզմանը շտապող կանանց վարսերի մէջ, քամին՝ մանուկների աչքերում:

Սաղմոսարանը մեծ գիրքն է քամու,
որ արծարծում է կրակները,
որ փոխադրում է աղաղակներ,
որ կրում է երկնքի բեղմնափոշին,
որ բարձրացնում է արծուի թեւերի վրայ
նրան՝ ով բռնւում է փափաքով
ապրելու երկնքի ու երկրի սահմանագծի վրայ:

